

Բանկ>> ԲԲԸ-ի կողմից շահառու Հիմնադրամին է փոխանցել 57.458.000 ՀՀ դրամ, նպատակը՝ որպես թիվ 24261380358 երաշխիքի վճարում Պրինցիպալ ԱԶ Սասուն Դուլունց, ուստի Դատարանը գտնում է, որ անվավերության հետևանքների կիրառման մասով հայցը ևս ենթակա է բավարարման, ուստի որպես անվավերության հետևանք՝ Պատասխանողին պետք է պարտավորեցնել Հայցվորին վերադարձնել գանձած ՀՏՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/61 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում որպես հայտի ապահովում ներկայացված <<Ակբա Բանկ>> ԲԲԸ-ի կողմից 17.07.2024թ. տրամադրված թիվ 24261380358 բանկային երաշխիքի գումարը:

Սիաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես վճարվել է անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հոգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 300.000 ՀՀ դրամ՝ որպես առաջին ատյանի և վերաքննիչ քաղաքացիական դատարաններում հայցի և վերաքննիչ բողոքի քննության համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ո Ւ Ց

<<Սասուն Դուլունց Արամայիսի>> ԱԶ-ի հայցն ընդդեմ <<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ>> ՀՄԴ-ի, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ <<Ակբա Բանկ>> ԲԲԸ-ի՝ <<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ>>-ի գործողությունը՝ ՀՏՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/61 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի գումարը վճարելու պահանջն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել <<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ>> ՀՄԴ-ի գործողությունը՝ ՀՏՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/61 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում որպես հայտի ապահովում

ներկայացված <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ-ի կողմից 17.07.2024թ. տրամադրված թիվ 24261380358 բանկային երաշխիքի գումարը՝ 57.458.000 ՀՀ դրամ վճարելու պահանջը:

Որպես անվավերության հետևանք՝ <<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ>> ՀՄԴ-ին պարտավորեցնել <<Սասուն Դուլունց Արամայիսի>> Ա/Զ-ին վերադարձնել գանձած ՀՏՁՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/61 ծածկագրով գնման քնթացակարգի շրջանակներում որպես հայտի ապահովում ներկայացված <<Ակբա Բանկ>> ԲԲԸ-ի կողմից 17.07.2024թ. տրամադրված թիվ 24261380358 բանկային երաշխիքի գումարը:

<<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ>> ՀՄԴ-ից հոգուտ <<Սասուն Դուլունց Արամայիսի>> Ա/Զ-ի բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես առաջին ատյանի և վերաքննիչ քաղաքացիական դատարաններում հայցի և վերաքննիչ բողոքի քննության համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ



Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել <https://verify.e-gov.am> կայքում մուտքագրելով IE01-011D-4953-A02F հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը: